Արավուս

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 87 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 22 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1390 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ:
Գտնվում է Տեղ գյուղի մոտ, Գորիս-Ստեփանակերտ մայրուղու ձախ կողմում, լեռնալանջի վրա: Արավուսցիների նախնիները 18-րդ դարում այստեղ են եկել Ղարաբաղի Արավուս (Քարագլուխ) գյուղից: Գյուղում 1933թ. կազմավորվել է կոլտնտեսություն, որը լուծարվել է 1991թ., նախկինում ընդգրկված էր Տեղի գյուղխորհրդի կազմում, տարանջատվել է 1991-ին:
Գյուղի տարածքում կա 18-րդ դարի եկեղեցի:Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 443 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 410 հա, որից՝
- վարելահող՝ 229 հա, խոտհարք՝ 22 հա, արոտ՝ 50 հա, այլ հողատեսք՝ 109 հա
- բնակավայրերի հողեր՝ 28 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,
- ջրային հողեր՝ 3 հա